բոնք գրեթէ բացառապէս այդ նիւթին են նը-ուիրուած. երկրորդ հատորի 13-րդ գլուխն էլ պարունակում է կարեւոր տեղեկութիւններ Ղարաբաղի մասին քաղուած անմիջական եւ պաշտօնական աղբիւրներից: Այս բոլորից դուրս՝ Հաքստհաուզէնի աշխատութեանը կցուած են բաւական թուով հէքեաթների, առակների եւ հայ բանահիւսութեան վերաբերող նման նիւթերի գերմաներէն թարգմանութիւնները, որոնց մի մասը կատարուած է եղել Խաչատուր Աբովեանի ձեռքով:

Նախ՝ տեսնենք, թէ Հաքստհաուզէն ի՞նչ տեղեկութիւններ է տալիս մեզ Աբովեանի մասին: Դրանցից ընթերցողը կը տեսնի, թէ ինչպիսի բարձր կարծիքի է եղել գերման գիտնական ճամբորդը անուանի հայի մասին, բայց նաեւ այն, թէ որպիսի՛ մեծ եւ անմիջական մասնակցութիւն է ունեցել Աբովեանը՝ Հաքստհաուզէնի անունով լոյս տեսած գրքի այն նիւթերի հաւաքման մէջ, որոնք վերաբերում են մեր երկրին ու մեր ժողովրդին: Որչափ մէկը, այնչափ եւ միւսը արդարապէս հեղինա՛կ համարուել կարող է այդ հատուածների, գուցէ Աբովեան մինչեւ իսկ աւելի իրաւունքով, քան Հաքստհաուզէն: Մի բան, որ մեզնում արժանի յիշատակութեան չէ արժանացել:

Այսպիսով, Քանաքեռցի մեծ հայը ոչ միայն հայրն է մեր աշխարհիկ գրականութեան, ոչ միայն հիմնադիրը հայկական նոր դպրոցի եւ մանկավարժութեան, այլ եւ առաջին մարդը, որ արժանի ուշադրութիւնն է դարձրել հայ ժողովուրդի ներքին-ընկերային կեանքը ուսումնասիրելու անհրաժեշտութեան վրայ:

Ահա՛ թէ ինչու մենք արդար համարեցինք այս յօդուածն էլ խորագրելու Հաքստհաուզէն եւ Աբովեան:

* * *

Խաչատուր Աբովեանի մասին զանազան առիթներով տեղեկութիւններ է հաղորդում մեզ Հաքստհաուզէն՝ իր աշխատութեան մէջ: Մենք այստեղ կ'աշխատինք լրիւ կերպով ամփոփել այդ բոլորը՝ որպէս նիւթ հայոց նոր գրականութեան պատմութեան ընդհանրապէս եւ Աբովեանի կենսագրութեան՝ մասնաւորապէս:

«Աբովեանի հետ ես ծանօթացայ Թիֆլիսում,— ասում է Հաքստհաուզէն,— նրա մասին գրքիս շարունակութեան մէջ յաճախ խօսք կը լինի, որովհետեւ գլխաւորապէս նրա՛ն եմ պարտական ես՝ հայ ժողովուրդի կեանքի պայմանների մասին իմ ձեռք բերած ծանօթութիւնը»:

Այս փաստը սկզբից իսկ որոշակի արձանագրելուց յետոյ՝ Հաքստհաուզէն անմիջապէս կցում է հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները Աբովեանի մասին.

«Աբովեան ծագում է մի ժառանգական հայ գիւղապետի տոհմից: Բուն Վրաստանում Գրուզիա-Քուրթալինա) եւ Իմերէթիայում ռուս վարչութիւնը այս կարգի տոհմերը ճանաչել է որպէս իշխաններ (կնեազ), իսկ Հայաստանում՝ ոչ իսկ որպէս ազնուականներ: Այն, ինչ որ առաջ այնտեղ չարն էր գործ դրուում, այստեղ, ընդհակառակը, անարդարութեան է վերածուել:

«Աբովեան նպատակ է ունեցել կուսակրօն հոգեւորական դառնալու: Նա արդէն միաբան էր Էջմիածնի հռչակաւոր վանքում, երբ ճամբորդ Պարրօտը) պատրաստութիւն էր տեսնում այնտեղ, Արարատ սարը բարձրանալու: Պարրոտ որոնում էր մի յարմար տեղացի մարդ, ուստի առաջարկում է երիտասարդ միաբանին՝ իր հետ ճամբորդել դէպի Արարատ: Նա (Պարրօտը) տեսաւ չուտով, որ Աբովեան նշանաւոր տաղանդ է, ուստի յորդորեց նրան՝ գերման համալսարական ուսում ձեռք բերել: Աբովեան գնաց Դորպատ եւ չորս տարուայ ընթացքում*) ձեռք բերեց գերման համալսարական կատարեալ կրթութիւն: Նա խօսում է եւ գրում գերմաներէն այնչափ լաւ, որ ոչ ոք*

---

*) *Այստեղ Հաքստհաուզէն դնում է հետեւեալ ծանօթութիւնը. «Դժբախտաբար, այս ազնիւ մարդը՝ Աբովեան այլեւս չէ ապրում. մի օր նա տնից դուրս է եկել եւ այլեւս բնաւ չէ վերադարձել: Զուր են անցել բոլոր հետախուզումները»:*

Տե՛ս Ե՛ւ էջ 305 ծանօթ., ուր ասուած է. «Ինչե՞ր պիտի անէր այս մարդը (Աբովեան), եթէ իրեն համապատասխան դիրք տրուէր նրան»:

(*) *Տես նաեւ I 419. Աբովեանի ուսման տեւողութիւնը Դորպատում* վեց տարի *է եղել* (1830–1836), *եւ ոչ թէ չորս:*